

Մ. ՊԱՆԱՄԱՐՅՈՎ

ՄԵՐ ՌԱՊՈՐՏԸ XVII

ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(Ապահովենք պետական պարտավորությունները 100%-ով)

БИБЛИОТЕКА
МИНИСТЕРСТВА
ВОСТОЧНОСЛАВЯНСКИХ
ИЗУЧЕНИЙ
С.-ПЕТЕРБУРГ

338.14

7-82

34-15
ՍՁ 882

Մ. ՊԱՆԱՄԱՐՅՈՎ

338.14

7-82

17 FEB 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТРОЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԵՐ ՌԱՊՈՐՏԸ XVII

ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(Ապահովենք պետական պարտավորությունները 100%-ով)



ԿՈՒՍՀՐԱՑ

Բազու—1933

23.07.2013



59186-66

Կազմեց Հ. Սարգսյան, Խմբագիր՝ Հ. Ելչիբեկյան, Սրբազրիչ և Թղթարկու Ա. Աբխաթյան

Baş Mətbuat Mydır. Myvəkkiligi №7175. Sifariş № 1182. Tir. 3000. Fırqənəş № 58. İstehsalata verilmiş 16-XII-33 Capa verilmiş 23-XII-33 Cap listi 1. Kağız formatı 62X94. Hurufatların qadarı—39.424. Azərnəşr mətbəəsində basıldı. Bakı. Əli Bajt

30761

ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐԸ—ՌԻՆԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ Ե

Վորպեսզի մենք ավելի լավ ապրենք, վորպեսզի բոլոր կոլ-խոզնիկներին ունեւոր դարձնենք, հարկավոր է բոլոր կոլխոզ-ները դարձնել բոլշևիկական և բարձրացնել կոլխոզային ու սովխոզային դաշտերի բերքատուութունը:

Գյուղատնտեսական մշակույթներից վճռն է մեզ մոտ՝ Ադրբեջանում ամենագլխավորը—Բամբակը:

Ադրբեջանը դառնում է ԽՍՀՄ-ի բամբակային յերկրորդ բա-զան և առաջինը՝ յեզիպտական բամբակի բուծման տեսակե-տից: Բամբակը մեր գյուղի, մեր գյուղական տնտեսության տա-նող կուլտուրան է: Այդ վոչ վոք յերբեք չպետք է մոռանա-լ: Խորհրդային Ադրբեջանի բամբակային ռայոններում կոլխոզնե-րում արդեն միացրված է գյուղական տնտեսությունների միւ-չեվ 69⁰/₁₀₀-ը, իսկ մի շարք ռայոններում իրականացրված է համա-տարած կոլեկտիվացումը: Մեր ՄՏԿ-ների հազարավոր տրակ-տորները մշակում են բամբակի դաշտերը: Բամբակի ամբողջ բերքի իննը տասերորդը կոլխոզներն են տալիս: Այժմ մարտական խնդիրն է պայքարել բարձր բերքի, մազմզուկի լավ վորակի, լավ մշակման, բերքահավաքի համար: Բամբակն աշխատանք պահանջող կուլտուրա յե, այսինքն պահանջում է մեծ ուշադրու-թյուն, խնամք, աշխատանք և միայն այն ժամանակ բերքը լավ կլինի: Մեր շատ կոլխոզնիկները և մենատնտեսները արդեն այդ հասկացել են: Այս տարի, համեմատած անցյալ տարիների հետ բամբակի վրա վատ չեն աշխատել: Յանքսը 10-12 որ ավելի շուտ են վեջացրել քան 32 թվականին: Իսկ կանուխ ցանքսը բամբակի համար չափազանց կարևոր գործ է՝ դրանից բամբակը շուտ է հասնում: Մինչև ցրտերի վրա հասնելը կարելի յե հավա-քել և հանձնել պետությանը: Այս տարի չորս քաղհան և չորս մշա-կույթ (կուլտիվացիա) են կատարել: Ադրբեջանի բամբակաբու-ծության ամբողջ ժամանակաշրջանում առաջին անգամն են յերկու նոսրացում կատարել, քաղհանի ժամանակը կրճատել են 15 որով: Յերրորդ և չորրորդ մշակույթն անցյալ տարվանից լավ ու կազմակերպված են կատարել: Զրելու կամպանիան անցել է կազմակերպված: Ակոսային ջրումը անցյալ տարվա 33 հեկ-


տարի դիմաց կատարված ե 55 հազար հեկտարի վրա: Աշխատունակ կոլխոզնիկների 100 տոկոսը համառ պայքար են մղել բամբակենու գյուղատնտեսական վնասատուների (թրթուռի, դաշտային թիթեռի, մորեխի) դեմ: Այդ բոլորին մենք հասել ենք շնորհիվ, նրան վոր բամբակի համար պայքարել ենք բոլշևիկորեն, մասսաների լայն մասնակցությամբ և կուսակցության ղեկավարությամբ: Բայց այդ դեռ բոլորը չէ: Զիպտի մոռանալ, վոր դասակարգային թշնամին ջախջախված ե բայց դեռ չի վոչընչացված: Բարձր բերքի, մազմզուկի լավ վորակի համար հարվածային պայքարը առաջներս ե: Մեր ֆաբրիկներն աճում, կա-կատարելագործվում, ընդլայնվում են և ավելի ու ավելի շատ բամբակի յեն սպասում: Գարնան համար պետք ե պատրաստվել մարտականորեն: Ամեն ինչ նախատեսներ, հաշվել, վորպեսզի վորակն ապահովված լինի: Սովորենք բեզենչուկյիններից, թե ինչպես պետք ե մաքուր և ճոխ հերկել, պարարտացներ հողը: Բեզենչուկյինները յեղել են մեզ մոտ գյուղում և Ադդաշի ու Կազախի կոլխոզնիկները զրուցել են նրանց հետ: Զմեռային արաթը, աշնան հերկը, ցանքսի համար լավ պատրաստվելը—անա մեր գալիք մեծ հաղթանակների գրավականը:

Դեպի մարս բոլշևիկյան գաղութը լավ անցկալ, նելու բամբակը լավ բուծանելու համար: 17-րդ համագումարին դիմավորենք բամբակային դաշերի նոր հաղանակներով:

ԱԳՐՈ—ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ

Անցյալ տարի առաջին անգամն են անցկացվել ագրո-տեխնիկական լայն կոնֆերանսներ (Բարդայում, Ադդաշում, Շամխորում և այլն): Այդ կոնֆերանսները հետաքրքրել են կոլխոզնիկներին, նրանց մոտեցրել են ագրո-տեխնիկային: Հարկավոր ե ապագայում ևս լայն կերպով կիրառել նման կոնֆերանսների հրավերումը: Մի շարք ռայոններում և կոլխոզներում ստեղծված են ավագների խորհուրդներ: Նրանք դեռ թույլ են աշխատում. տեղական կազմակերպությունների խնդիրն ե — ոգնել նրանց: Շատ կոլխոզներում, հենց մասսայի լայն մասնակցությամբ անց են կացվել ագրո-քաղորներ: Այդտեղ կոլխոզնիկն իր փորձը ամրապնդում ե գյուղատնտեսական գիտելիքներով: Մեր բամբակի դաշտերում ծնվել ե բերեգադիր իզոտովեց Մուսաֆա Մամեդովի ագրո-նարյադի գաղափարը: Բամբակային դաշտերում լայն ալիքով անցավ Մուստաֆայի ագրո-նարյադը. հարյուրավոր և հազարավոր լավգույն կոլխոզնիկներ մրցել են և մրցում են բամբակը լավ ու արագ հավաքելու և պետությանը հանձնելու համար:

Այժմ ամեն մի կոլխոզնիկի, ամեն մի մենատնտեսի խընդիրն ե ել ավելի մեծ ուժով կովել բամբակաքաղի ավարտման և ավերող բամբակը շուտափույթ կերպով պետությունը հանձնելու համար: Այժմ իսկ պետք ե սկսել գարնան նախապատ-



Գյուղատնտեսության մեքենայացումը կոլխոզնիկին տանում ե դեպի ունեվոր կյանք

րաստման աշխատանքները ոգտագործել ձմեռվա ժամանակաշրջանը ագրո-տեխնիկական կոնֆերանսներ անցկացներու, տրակտորիստներ, սերմացաններ պատրաստելու, ագրոկանոնները սովորեցներու, բամբակի և նրա բուծման տեխնիկան ուսումնասիրելու համար:

ԼԱՎ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ ՅԵՎ ՇԱՏ ԵՆ ԱՍԱՅԵԼ

Ով շատ և լավ վորակի բամբակ ե տալիս պետությանը, նա ավելի շատ հաց, մանուֆակտուրա, շաքար ե ստանում: Պետությունն ոգնում ե բամբակ մշակողին: Հանձնված բամբակի համար Ագրքեշանի կոլխոզները և մենատնտեսները ստանում են չորս միլիոն փութ հաց, 152 հազար փութ շաքար, 12 միլիոն մետր մանուֆակտուրա: Այդ գզալիորեն շատ ե նրանից, ինչ բամբակ ցանողները ստացել են անցյալում: Յեկ կոլխոզնիկների յեկամուտը այս տարի ավելի յե յեղել քան անցյալներում: Ահա ձեզ որինակներ: «Բուռյաթ Զադեի» անվան կոլխոզում (Քյուրդամիրի ռայոն, Կերար գյուղ), կոլխոզնիկ Նուսրաթ Ալի Կարաշ ողլին, նախկին չքավոր, մինչև կոլխոզ մտնելը չի ունեցել նույնիսկ 30 փութ հատիկ, իսկ այժմ ունի

118 աշխուր, ստացել է 37 ցենտներ (234 փուլթ) հացահատիկ: Մի այլ կոլխոզնիկ, Ահմեդ ողլին, նախկին բատրակ, կոլխոզ է մտել 1929 թվին, յերբեք իր ցանքսը չի ունեցել, իսկ այժմ կոլխոզում նա ստացել է 21 ցենտներ (128 փուլթ) հացահատիկ. կարյազինի ռայոնում «Ստալինի» անվան կոլխոզում (Դալյատորլի գյուղ) Իսա Բաբանը ունենալով 152 աշխուր, ըստացել է 8 ցենտներ (48 փուլթ) հացահատիկ, իսկ դատարկաշըրջիկ (լողը) Իսկենդեր Հուսեյին ողլին, ունենալով 73 աշխուր, ստացել է միան 3 ցենտներ (18 փուլթ) հացահատիկ:

Նույն ռայոնում, «Ստալինի» անվան կոլխոզում (Ալբասալլի գյուղ) մի տնտեսությունը միջին հաշվով ընկել է 27 ցենտներ (162 փուլթ) հացահատիկ: Աբդուրախմանի գյուղի «Շարք» կոլխոզում մի տնտեսությունը 23 ցենտ (138 փուլթ) և Սեիդ-Ախմեդի գյուղի «26» ի անվան կոլխոզում 20 ցենտներ (120 փուլթ) հացահատիկ:

Աղբբեջանի մի հարյուր կոլխոզներ չեն, վորոնցում մի աշխուրի արժեքն այժմ հասնում է 9-10 կիլո հացահատիկի, իսկ անցյալ տարի դրա կեսն իսկ չեն ունեցել: Բացի հացահատիկից բամբակաբույծները ստանում են, շաքար, թեյ, սապոն, մանուֆակտուրա, կոշիկ և բոլորն, ինչ նրանց անհրաժեշտ է:

Այժմ բամբակաբույծների գյուղն է մոծվում միլիոն ռուբլու լախնապառ ապրանքներ և տնային պիտույքներ, պատրաստի հագուստ, տան կարասի, տակառներ, թասեր, լվացարաններ և այլն: Գյուղի դեմքը փոխվում է, գյուղը գնում է դեպի ունեվոր կյանք: Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի լոգունգը, կոլխոզները դարձնել բոլշևիկական յեվ կոլխոզնիկներին ունեվոր՝ սկսում է կյանքի մեջ մտնել Աղբբեջանի գյուղում:

Այժմ խնդիրը նրանումն է, վորպեսզի հաջորդ տարում ել ավելի մեծ բերք ստանանք: Մեր ֆաբրիկներն ու գործարանները գյուղին կտան նոր տրակտորներ, նոր մեքենաներ: Պետք է նրանց տիրապիտել, նրանց խնամել, պահպանել սովորեր:

Լավ վորակի յեվ ցաւ բամբակ: Ել ավելի լայն ուղի դեպի ունեվոր կյանք: Ահա այսուվա մեր լոզունգը: Լոզունգ, վորով մենք գնում ենք 17-րդ կուսիսամագուստին:

„ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՍԸ—ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ Ե՛“

(Ստալին)

«Կոլխոզների և մենատնտեսների կողմից հացը պետությունը պարտադիր կերպով հանձնելու» կուսակցության և կառավար-

ություն 1933 թվի հունվարի 19-ի պատմական դեկրետով հացամթերման նոր մեթոդ է սահմանված: Նույն կարգը մնում է նաև 1934 թվականի համար:

Այդ որենքով ամեն մի կոլխոզ և մենատնտես պարտավոր է հաստատուն նորմաներով պետությունը հաց հանձնել համաձայն ցանած տարածություն ամեն մի հեկտարի: Հացը կհանձնես պետությունը, լցնես սերմային ու ապահովագրական ֆոնդերը, մնացած բոլորը բոնն է: Ահա այդ չեն հասկացել Մասալիի ռայոնական կազմակերպությունները, կոլխոզնիկներին չեն հասկացրել, վոր կոլխոզի, կոլխոզնիկների ու մենատնտեսների առաջնակարգ խնդիրը պետական պարտավորությունները կատարելն է, և ի՞նչ է ստացվել: Կոլխոզները, կոլխոզնիկները դեռ չհանձնած իրենց նորմաները, սկսել են լցնել սերմային և ապահովագրական ֆոնդերը, չալթուկը բաժանել ըստ աշխուրների, իսկ մի քանի հետադեմ կոլխոզներ սկսել են չալթուկը ծախել ու խաղողի հետ փոխել և մթերումը սեպտեմբերին փաստորեն կանգ է առել:

ՀԱՅԸ ՀԱՆՁՆԵԼ ԵՄ—ԵԼ ՎՈՉ ՄԻ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ

Որենքով խիստ և խիստ արգելվում է փոփոխել սահմանված կարգը և հանդիպական պլան տալ: Դրա համար դատում են, այն ել շատ խիստ: Ինչպիսի՞ նորմա յե հաստատված յեղել 1933 թվին մեզ մոտ Աղբբեջանում: Այն կոլխոզների համար վորոնք չեն սպասարկվում ՄՏԿ-ից՝ ամենաբարձր նորման մի հեկտարից—280 կիլո (17½ փուլթ) ցորեն (Սալմասի ռայոն), իսկ ամենացածրը մի հեկտարից—65 կիլո (4 փուլթ) ցորեն (Խիզի, Չուվանդի, Կոնախքենդի և այլ ռայոններ): ՄՏԿ-ից սպասարկվող կոլխոզների համար ամենաբարձր նորման մի հեկտարից—160 կիլո (10 փուլթ) և ամենից ցածրը—23 կիլո (1½ փուլթ) ցորեն (Նախ Խ. Ս. Հ.): Մենատնտեսները մի հեկտարից տալիս են տվյալ ռայոնի ՄՏԿ-ից չսպասարկվող կոլխոզների նորմայից 5-10% ավելի: Նորմաները ցածր են, դա միայն հինգ կամ տասներորդ մասն է նրա ստացած բերքի, մնացածը մնում է կոլխոզնիկին: Մոտավորապես նույնպիսի նորմաներ պետք է սպասել և 1934 թվին:

Որենքը լայն հնարավորություններ է տալիս. կոլխոզներն ունեն բոլոր տվյալները նրա համար, վորպեսզի ընդլայնեն ցանքսադաշտերը և բարձրացնեն բերքատվությունը, վորովհետև նրան բաժին է մնում իրենց կարիքների և կոլխոզային առևտրի համար:

Այժմ աշնանացանը վերջանալու վրա յի: Մենք պետք է 609 հազար հեկտար աշնանացան ցորեն և դարի ցանենք: Յուրաքանչյուր կոլխոզնիկ, մենատնտես պետք է հասկանա, վոր վորքան վոր նա շատ ցանի, այնքան նա լավ բերք կունենա, այնքան նրան ավելի շատ հաց կմնա և նա ավելի լավ կապրի:



Աստրախան-Բազարի կոլխոզնիկները մասսայորեն հացը հանձնում են— հանձնման կետին—Իլիչի-պողոտ:

Նույն չափով դա վերաբերում է նաև գարնանացանին: Ահա Ղուբայի ռայոնի Վլադիմիրսկու գյուղխորհրդի «Զվեզդա Վոստոկա» կոլխոզնիկները լավ են հասկացել կուլսակցության և կառավարության 1933 թ. հունվարի 19 ի դեկրետը: Նրանք այս աշնանը (1933 թ.) ցանել են 124 հեկտար ավելի քան թե անցյալ տարի: Սերմային ֆոնդը լրացրել են 1830 փուլ և ապահովագրականը 1179 փուլ: Սա անցյալ տարվանից ավելի յի: Անցյալ տարի նրանց մի աշխուրին ընկել է 2 կիլո, իսկ այս տարի—3 կիլո: Կոլխոզ են մտել 23 նոր տնտեսություններ: Այժմ նրանց մոտ 121 տնտեսություն է: Այդ բոլորը նրա համար, վոր «Զվեզդա Վոստոկա» կոլխոզը 1932 թվականի հացամթերման պլանը կատարել է վեց ամսում, իսկ 1933 թրվականին ըստ պարտավորության իր ամբողջ նորման ավել է 25 որում (1117 փուլ ավելի քան 32 թվականին):

Առարձնապես աչքի յեն ընկել Գյանշայի ռայոնի կոլխոզները, վորոնք իրենց տարեկան պարտավորությունները կատարել են 25 որում: Նրանց մասին գրել է «Պրավդա» թերթը:

Ահա մի որինակ Ադրբեջանի շատ կոլխոզներից, վորոնց արժանի կերպով կարելի յե անվանել բոլշևիկական, վորոնք հասկացել են մեր կուլսակցության Առաջնորդի ցուցմունքները:

Այդպիսին պետք է լինեն Ադրբեջանի բոլոր կոլխոզնիկները, այդպիսին նրանք կլինեն անկասկած: Մյուս տարի բոլոր կոլխոզները պետք է առաջին իսկ կալածից, առաջին իսկ ազունից հանձնեն իրենց նորման, կատարեն իրենց պարտականությունը իրենց պետության հանդեպ:

ՄԻ ԱՅԽՈՐԻՆ ԱՎԵԼԻ ՀԱՅ, ԲԱՆ ԹԵ ԱՆՅՅԱԼ ՏԱՐԻՆ

Ընկ. Ստալինի կոլխոզնիկներին ունեւոր դարձնելու լողունգը, վորը նա ավեց հարվածային կոլխոզնիկների համամիութենական առաջին համագումարում, անցկացրած հացամթերման կամպանիայի հետևանքով, համառ և անշեղ կերպով կիրառվում է կյանքի մեջ:

Ադրբեջանի հացահատիկային ռայոնների կոլխոզները աշխուրի արժիքի զգալի ավելացում ունեն:

Ահա մի քանի որինակներ առանձին-առանձին կոլխոզների աշխուրի չափի մասին: Դիվիչի, «Լենինի» անվան կոլխոզ, Շիրվի գյուղ—հարվածային Հուսեյին՝ Նովրուզ ողլին ստացել է 13 և կես ցենտներ (91 փուլ) հացահատիկ և 17½ ցենտներ (107 փուլ) կեր: Աստրախան Բազարի ռայոնում, «III ինտերնացիոնալի» անվան կոլխոզում ամեւալավ կոլխոզնիկը ունեցել է 260 աշխուր, ստացել է 16,4 ցենտներ (100 փուլ) ցորեն, իսկ «Կրասնիյ Պախար» կոլխոզում հարվածային Վրմիշեր, ունենալով 320 աշխուր, ստացել է 21,3 ցենտներ (128 փուլ) ցորեն:

Յեվ այսպես, յեթե այժմ աեմանն ու գարնանը աս ցա, նեմ, լավ հավաքեմ, աս հանձնեմ պետությանը, ել ավելի մեծ բեւք կսանանք, ել ավելի լավ կապրեմ:

ՀԱՅԸ ՀԱՆՁՆԵԼ ԵՆԲ—ԿՀԱՆՁՆԵՆԲ ՆԱՅԵՎ ՉԱԼԹՈՒԿԸ

Պետական պարտավորությունները կատարելը, պետությանը չալթուկ հանձնելու խնդրում դեկրետով նույն կարգն է հաստատված, ինչպես և հացի համար: Տարբերությունը միայն հանձնելու նորմայի մեջ է:

Ադրբեջանում հացահատիկային դաշտերի միջին բերքատվությունը 40-60 փուլ է մի հեկտարից, իսկ չալթուկինը՝ 100-120 փուլ: Դրա համար ել չալթուկ հանձնելու ամենաբարձր նորման 780 կիլո յե (47 փուլ) և ամենացածրը 350 կիլո (22 փուլ): Ինչպես է ընթանում չալթուկ հանձնելու պետական պարտավորությունները կատարելը: Չալթուկի հիմնական վճռողական ռայոններից առաջավորներն են՝ Աստա-

րան և Լենքորանը, վորոնք չալթուկ հանձնելու պլանը ժամանակից 2 ամիս շուտ են կատարել. պոչից գնում ե Մասալլըի ռայոնը: Յերեվում ե կոլխոզնիկները բավական չափով չեն յուրացրել, յերեվում ե նրանց վատ են հասկացրել չալթուկը պարտադիր կերպով պետությանը հանձնելու դիկրետի ամբողջ քաղաքական նշանակութունը:



Դիվիչիի հանձնման կետում

Մասալլըի ռայոնում գործերը վատ են նրա համար, վոր նրանք ցանքսը վերջացրել են ուշ և ցանել են վատ: Չալթուկն ինչպես հարկավոր ե չեն մշակել, ժամանակին չեն մտածել ջրի մասին, իսկ չալթուկը աճում ե ջրում, ջուր ե սիրում:

Մասալլըի Ռայգործկոմում այդ ջրով չեն զբաղվել: Վորպեսզի դարձյալ նույնպիսի անհարմար դրության մեջ չընկնեն, մասալլըցիներն և չալթուկային այլ ռայոններն ձմեռվանից պետք ե սկսեն մտածել գարնան մասին: Այժմվանից պետք ե մաքրել և ջրով լցնել մեծ ջրամբարները, հերկել լեզրանները (յեղեգնապատ հողերը): Պետք ե աշխատել, ջանք թափել, այն դեպքում բրինձ շատ կլինի:

Մասալլըցիների թերությունների վրա պետք ե դաստիարակվեն չալթուկային և հացահատիկային մնացյալ ռայոնների կոլխոզնիկները: Այժմ իսկ սկսեք ստուգել, թե մենք ինչ ենք ցանել աշնանը: Գարնանը նախապատրաստման ընդհանուր ստուգումն սկսեք: Ստուգենք սերմային և ապահովագրական ֆոնդերը: Միջոցներ ձեռք առ նրանց պաշտպանելու վրնասատուներից: Պետք ե հենց այժմ զբաղվել չալթուկի գարնան ցորենի, գարու, վարսակի, կարտոֆիլի և բանջարադեղի գարնանացանի համար հողեր առանձացնելու գործով:

ԲՐԴԻ ՄԹԵՐՄԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴԸ—ՎՈՋԽԱՐԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Անցած տարիներում բուրդը հանձնվել ե կոնտրակտացիոն պայմանագրերով: Մեծ խառնաշփոթություն ե յեղել:

Միության Ժողկոմխորհի 1933 թվի մարտի 10-ի վորոշումով և Ադրբեջանի Ժողկոմխորհի 1933 թվի մարտի 27-ի վորոշումով, մթերումների սխտեման արմատապես փոփոխվել ե: Այժմ տարեկան հաստատուն նորմաներ են սահմանված բուրդը պարտադիր կերպով պետությանը հանձնելու համար: Այդ պարտավորությունները հարկի ուժ են ստացել: Յերեվում ե, վոր նման սխտեմ պետք ե սահմանվի նաև 1934 թվականի համար: Վոչխար պահողին այժմ պարզ ե և հասկանալի, թե մի վոչխարից այժից, ուղտից ինչքան բուրդ պետք ե հանձն պետությանը և ինչ ժամկետներում:

Այժմ լայն հնարավորություններ ե բացվում բրդի արդյունաբերությունն ընդլայնելու համար: Ադրբեջանի վոչխարաբուծությունն իր զարգացման համար նոր հսկայական խթան ե ստանում: Վոչխարաբուծ կոլխոզնիկն այժմ հաստատ զիտե, վոր բոլոր ավելցուկները, բուրդը պարտադիր կերպով պետությանը հանձնելուց հետո մնացած ամբողջ ավելցուկը, նրա տրամադրության տակ ե մնում և ծասվում ե ըստ իր հոգեցողության, կամ անձնական կարիքների համար, կամ ել վաճառքի յեն գնում:

ՈԳՆԵՆԳ ՄԵՐ ՖԱՐԻԿԱՆԵՐԻՆ ԼԱՅՆԱՆԱԼՈՒ

Ադրբեջանում տարեց տարի աճում և զարգանում ե վոչխարաբուծությունը, բայց նա դեռ բոլորովին չի կազդուրվել մեծ կորուստներից, վորը նրան պատճառել ե կուլակոթյունը: Կուլակը, կատաղի դիմադրություն ցույց տալով գյուղի կապիտալիստական տարրերի վրա կատարվող հարձակմանը, փորձել ե վիժեցնել կոլեկտիվացումը և դիմել անասունների վոչընչացման սատանեական յեղանակին:

Կուլակային տարրերը ներս խցկվելով վորպես վարիչներ, պահեստապետներ, հաշվապահներ, ղեռնա կոլխոզներից, սովխոզներից ՎԱՅ-ից դուրս չեն վռնդված և այժմ գաղտագողի կերպով վնասում են մեր սոցիալիստական անասնապահությանը: Նրանք նարիմանովի, Կազախի ռայոններում մերինոս ցեղային վոչխարաբուծության զարգացման դեմ լուրեր են տարածում: Նրանք բրդի շուկյումով են զբաղվում, որինակ՝ Ղարադաշուի ռայոնի Պալաշևի գյուղխորհրդում «Դու-Յեսյա-

մայրի» ՎԱՅ-ում, ֆերմայի անդամները մասնավոր գնորդին ծախել են ֆերմային պատկանող բուրդը: Մինգեչաուրի «Ապրիլի 28-ի» անվան սովխոզում այնպիսի «հովիվներ» են աշխատում, վորոնք արոտատեղիներում յեղած հոտից վոչ-խարներ են քշում և տանում Գյանջայի շուկան վաճառելու:

Ահա գողային, կուլակային այդ նենգությունները պետք է շիկացած յերկաթով դադել և դուրս վոնդել մեր վոչխարաբուծական սովխոզներից և կոլխոզներից:

Ամրապնդենք վոչխարաբուծական ապրանքային ձեւաները, սովխոզները, կոլխոզները: Պետությունն ավելի շատ բուրդ տան: Ոգնենք մեր ճարտիկներին ընկալելով:

ՀԱՐԿՈՎ ՀԱՆՁՆՎԵԼԻՔ ԲՐԴԻ ՆՈՐՄԱՆ ՑԱԾԻ Ե

Առաջ, ըստ կոնտրակտացիայի Ղարաբաղի մի վոչխարից հանձնելու բուրդ հաշվվում էր 1,400 գրամ գարնանը խուզածից: Դա համարյա մի վոչխարից ամբողջ խուզածն է: Այժմ, հարկով հանձնելու բրդի հաստատուն նորման կոլխոզային և մենատնտեսական սեկտորում ի գլխին ամենաշատը 750 գրամ է, իսկ ամենաքիչը 650 գրամ: Աշնանը խուզված բրդի նորման 250 գրամ է:

Կոլխոզում լեղած տնտեսության, վորի հոտը ընդհանրացված է, իր անհատական ոգտագործմանը մնացած մի գլուխ վոչխարից հանձնելու բրդի նորման 10% ցածր է մենատնտեսի համար սահմանած նորմայից: Որինակ՝ Աղդամի ռայոնում մենատնտեսի համար մի գլուխ վոչխարից բուրդ հանձնելու նորման գարնանը խուզածից 785 գրամ է իսկ աշնան խուզածից 250 գրամ, ոգտվելով արտոնությունից, կոլխոզիկի տնտեսությունը գարնան խուզածից հանձնում է 706 գրամ, իսկ աշնան խուզածից 225 գրամ: Յեթե տնտեսությունը գտնվում է այնպիսի կոլխոզում, վոր վոչխարաբուծական ապրանքային ֆերմա (ՎԱՅ) ունի, այն դեպքում ել ավելի քիչ է հանձնում՝ գարնանից 628 գրամ, աշնանից 200 գրամ:

ԼԱՎ ԲՐԴԻ ՀԱՄԱՐ ՄԵՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զաքաթալայի ռայոնում առաջ կոշտ բրդի 1 կիլոգրամի համար տրվում էր 1 կիլոգրամ ցորեն, այժմ ՎԱՅ-ները ստանում են 1 կիլոգրամ հանձնած բրդին 1500 գրամ հաց: մնացած տնտեսությունները ստանում են 1200 գրամ հաց: Մերինոսի և նուրբ բրդի համար Գետաբեկի ռայոնում անցյալում (1932 թվին) մի կիլոգրամ հանձնած բրդին տվել են մի կիլոգրամ ցորեն, իսկ այժմ նույն քանակի համար տրվում է 2500 գրամ ցորեն:

Վորպես հարկ տրված նուրբ բրդի համար տրվում է արդյունաբերական ապրանքներ հաշված բրդի արժեքի 100 տոկոսով: Յեթե մի տնտեսությունը հանձնած է 50 կիլոգրամ բուրդ մի կիլոն 2 ուրբ. 13¹/₂ կոպ. արժեքով, վորի գումարը կազմում է 106 ուրբի 75 կոպեկ, ապա այդ տնտեսությունը ստանու է 145 կիլոգրամ ցորեն և 106 ո. 75 կոպեկի արդյունաբերական ապրանքներ: Յույց տրված գումարի մեջ մտնում է հացի, բամբակի կտորների, շաքարի և այլ ապրանքների արժեքը:

Բրդի ավելացուկը, վորը մնում է կոլխոզիկի, մենատնտեսի մոտ, կոլխոզային շուկայում կամավոր կերպով ծախելուց գրնվում է պետական մթերոդների կողմից՝ (Սոյուզ շերստ և Ագերիթաֆակ), պետական հաստատուն գներով ապրանքայնացման ավելացրած նորմաներով (հանձնած բրդի արժեքի 200%) փոխարենը տալով հաց:

Վոչխարաբուծական սովխոզների (Մինգեչաուր, Սամուխ), կոլխոզային վոչխարաբուծական—ապրանքային ֆերմաների (Զաքաթալա, Ղազախ, Գետաբեկ և այլն) կազմակերպման և աշխատանքի մեր հաջողությունները պետք է ամրապնդվեն:

Հոտը ձմռանը ապահովենք լավ կերով, վոչխարաբուծաբանով: Հոտի ազնվացման ճանապարհով և անասնաբուծական կամպանիայի հատուկ ուշադրությամբ կռվենք մատղաշները պահպանելու համար:

Անասնաբուծությունն Ադրբեյջանում բավականից ճեճ յերկրորդ մեծ խնդիրն է: Բրդի պլանի շուսափույթ կատարումը, յուրի հանձնման 100%-ով կատարումը, ահա այն մասնական լոգունգը, վորով մենք գնում ենք կուսակցության 17-րդ հավագումարը:

ՄՍԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԻԻ ԽԹԱՆ

ԽՍՀՄ-ի Ժողկոմիսորի և Համ. կոմ. (բ) Կուսակցության Կենտրոնական կոմիտեյի 1933 թվականի սեպտեմբերի 23-ի «մասմթերման մասին» վորոշումը մնացած միջոցառումների հետ միաժամանակ՝ մասմթերման պլանի փոքրացումը, հոտը հարկադրաբար ընդհանրացնելու արգելումը, անասնամթերման մասին որենքը—նպաստել են անասնապահության հետագա ընդլայնմանը: Այն, ինչ գլխավորն է այդ որենքում, դա անխտիր բոլոր տնտեսությունների համար հաստատուն նորմաների սահմանումն է: Մենատնտեսների համար ամենաբարձր նորման տարեկան 57 կիլոգրամ է (Կարադոնու, Դոստաֆյուր, Աղջաբեգի և այլն) իսկ ամենացածրը 35 կիլոգրամ (Նախիջե-

վանի ԽՍՀ): Նորման կարելի չե մտցնել միանգամից, կարելի չե նաև մաս-մաս (կվարտալներով): Կոլխոզնիկները նորման մենատնտեսների նորմայից ցածր ե, իսկ այն կոլխոզնիկները համար, վորոնց կոլխոզում անասնապահական ապրանքային ֆերմա կա—ել ավելի ցածր ե: 1934 թվականի նորմաները 1933 թվականի նորմաներից բավականաչափ ցածր են: Այժմ նորման կատարելը միանգամայն հեշտ ե: Այն տնտեսությունները, վորոնք ժամանակին կատարում են իրենց նորման, կատարյալ իրավունք ունեն վարվել մնացած բոլոր անասունների նկատմամբ ըստ իրենց սեփական հայեցողության:

Անասնապահությունն այժմ զարգանում ե արագ քայլերով: Բոլոր կոլխոզները, կոլխոզնիկները և մենատնտեսները սկսել են անասուններ գնել, սկսել են կովեր, այծեր, գոմեշներ ձեռք բերել: Այժմ անմիտ տեղն անասունները չեն մորթոտվում: Մատղաշ և ցեղային անասուններն խնամում պահպանվում կերակրվում են: Ապրանքային անասնապահական ֆերմաները սկսել են աճել: Մի փոքրիկ որինակ բերենք: Շամխարի ռայոնի «Ֆրունզեի» անվան կոլխոզում 75 տնտեսություն կա: Կոլխոզն ու կոլխոզնիկները ժամանակից շուտ պետությունն են հանձնել մսամթերումը: Կատարել են մսամթերումը, կաթի հանձնումը և 13 կոլխոզնիկներ իրենց ոգտագործման համար կովեր են գնել: Այդ կոլխոզնիկները շուկայում գնել են 4 հորթ, նրանցով իրենց պետական պարտավորությունները կատարելու համար, բայց հետո յերկար մտածել են ու այդ հորթերը իրենց տնտեսության մեջ փոխել են մի մեծ կովի, վորն արդեն անպետք ե տնտեսության մեջ, այլ պետքական ե միայն մսի համար և այդ կովը տվել են վորպես հարկ, իսկ հորթերը թողել են իրենց կոլխոզում մեծացնելու համար: Այդ վատ բան չե, իսկ նման որինակներ շատ կան:

Կոլխոզնիկները խնամում են հորթին: Այժմ ամեն մի կոլխոզնիկ կով պետք ե ունենա: Մենք արդեն համոզվում ենք դրան:

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ. Կոմ. (բ) Կուսի. Կենտրոնական Կոմիտեի ռոգոստոսի 28-ի վորոշումով նոր որենք ե հրատարակված 1934 թվականի համար: Կոլխոզնիկը, մենատնտեսը նոր տարուց չորս ամիս առաջ գիտե իր հաստատ նորման, գիտե, վոր վոչ մի հանդիպական պլան չի լինելու, դրա համար ել նա այժմ արդեն կարող ե կառուցել իր անասնաբուծության, իր տնտեսության պլանը: Նա կարող ե հենց այժմ սկսել իր պարտականությունների կատարումը այն մտադրությամբ, վորպեսզի շուտ ազատվի և ամբողջովին տնորինե իր անասունների նկատմամբ: Վորքան ել նա անասուններ գնելու լինի,

վորքան ել նա անասունների աճեցում ունենա, քանի վոր նա տվել ե իր նորման, նշանակում ե արդեն վոչ վոք նրան չի անհանգստացնի վոչ մի մսամթերման համար:

Այսպիսով, 1934 թվին պետությանը պարտադիր կերպով միս հանձնելու ռեմիս ռաւ կոգնի անասնապահության հետադա անցմանը:

Այժմ ժամանակն ե, վորպեսզի սկսենք բացատրել գյուղացուն, կոլխոզնիկին կուսակցության և կառավարության վորոշման եյությունն ու իմաստը: Կոլխոզնիկները ստույգ պետք ե իմանան, թե ինչքան միս և ինչ ժամկետներում նրանք պարտավոր են հանձնել: Կոլխոզնիկը ժամանակին պետք ե կառուցանա ստանալ պետական պարտավորության թուղթը: Այդ բոլորը պարտավոր են անելու կոլխոզների վարչությունները, գյուղխորհուրդները և իշխանության տեղական որդանները:

Ադրբեջանի կոլխոզնիկներն ու մենատնտեսներն արդեն հասկացել են, թե պետության կողսից ինչ ե պահանջվում նրանցից: Նրանք գիտեն, վոր միսը հարկավոր ե նրա համար, վորպեսզի կերակրեն բանվորներին, Կարմիր Բանակին: Նրանք գիտեն, վոր և՛ բանվորները և՛ կարմիր բանակայինները իրենց հարազատ յեղօայրներն են—նրանց պետք ե միս տալ, նրանց պետք ե կերակրել:

Յեւ վ այսպես, պետական պարտավորությունների կատարումն Ադրբեջանի կոլխոզնիկների և աշխատավոր մենատնտեսների առաջնակարգ խնդիրն ե:

Պետք ե յարել բոլոր ուժերը, վորպեսզի 1933 թվականի մնացած հաշված որերում վերացնել բոլոր պոչերը, կատարելով մթերումները 100%-ից վոչ պակաս: Ավարտել ենք հացի հանձնումը, յուղի հանձնումը, վատ չենք հանձնում միսը, ծխախոտը, չալթուկը, խոտը: Ամբողջ ուշադրությունը բամբակի հանձնման վրա:

Բոլոր ուժերը դեպի բամբակային ճակատը:

«**ՊԱՅԵԱՐ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ**» մեր մարտական լոզունգը բոլոր նակասներում առաջին հերթին:

Պայքար հանուն հավաքած բամբակի, հացի կարտոֆելի կատարյալ պահպանության համար:

Պայքար, մեր տեքստիլ արդյունաբերությունը լավ, մաքուր բամբակով ապահովելու համար: Վոչ մի տեղամաս չպետք ե մոռացվի:

Կանեփի, դարմանի, ծղնոտի, քաղցր բյանի և այլ մթերումները կատարել:

Ամեն մի կոլխոզ, ամեն մի մենատնտես պետք է իրենց տնտեսությունները ստուգեն պետություն առաջ և այս վճռական որերին միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի պարտքի տակ չմնան:

ԱՄԵՆ ՏԵՂ ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆԲ:

Այժմ այդ ստուգման գործով պետք է զբաղվեն գյուղխորհուրդները, կոլխոզների վարչությունները:

Պատրաստվենք կուսակցության համագումարին ռապորտներ կայացնելու մեր նվաճումների մասին, պետության և կուսակցության կողմից մեզ տրված պարտավորությունների կատարման մասին:

17-րդ համագումարին ռապորտ ներկայացնել կարող եմ միայն նա, ով պահվով կավարժի 1933 թվականը, ով պեսական պարտավորություններ կկատարի քանակապես յեվ կապահովի վորակը:

Ագրբեջանի կոլխոզիկներ, կոլխոզային և սովխոզային դաշտերի ԲՍՄԲԱԿԱԲՈՒՅԾՆԵՐ մրցության մեջ մտեք 17-րդ համագումարին ռապորտի պատրաստման շուրջը:

Համագումարին ներկայացնելիք մեր ռապորտին պատրաստվենք կոլեկտիվորեն, կովեմք առաջնության համար, բարձր ցուցանիշների համար:



30. 761

СЛ 20-40

СОВЕТСКИЙ
СОЮЗ
1937-1938
ГОД

М. Горький

Наш роман XVII-го столетия

ПАРТИЗАН
БГУ-1937